№ 81 ԿԻՐԱԿԻ ՄԱՑԻՍԻ 1

1905

ԿԻՐԱԿԻ ՄԱՑԻՍԻ 1 № 81

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համր եղանակ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի օրագիրը. Բագուի իրականութիւնից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական աշխարհից. Եպօնական սահմանադրութիւնը. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՄՐ ԵՂԱՆԱԿ

—

Ուսուցման այդ եղանակը մեր երկրում ասված է։ Նրա գործադրութեան դէմ բողոքել են ծնողները, ուսուցիչները, հրապարակախօսները և ուսանողները։

Իսկ նա մանկավարժութեան նորագոյն եղանակներից մէկն է, որը ոչ միայն գովասանքի է արժանացել իր հայրենիքում, Ամերիկայում, ուր նա ծնունդ է առել, այլ և առաջ է բերել հետևողութիւնների և նմանողութիւնների մի բազմութիւն Եւրոպայի գանազան երկիրներում։

Այդ եղանակին քաղաքացիութիւն տուողն էր Բերլից, որ փորձեց նրա միջոցով դիւրացնել այլազգիների համար նոր լեզուների ուսումնասիրութիւնը։ Եւ նա ունեցաւ աջողութիւն։

Բերլիցը սովորեցնում է նոր լեզուն ոչ թէ թարգմանելով, ոչ թէ մայրենի լեզուի միջոցով, այլ ցոյց տալով առարկաները և աշխատելով շօշափելի ձևերով հասկացնել օտար լեզուի բառերը, հեռանալով այն եղանակից, որով մանուկը սովորում է լեզուն։ Այդ պատճառով նա կոչվում է ոչ միայն համր, այլ և բնական եղանակ։

Ինչու ենք ուրեմն մենք բողոքում համր եղանակի դէմ, ինչու մեր երկրի բոլոր անկիւններից լսվում են ձայներ նրա գործադրութեան դէմ։ Ինչու չենք գնահատում մանկավարժութեան այդ նորագոյն յայտնութիւններից մէկը։ Միթէ մենք սխալվել ենք և սխալվում ենք։

Ոչ. մենք չենք սխալվում և մեր բողոքն ու ձայրոյթը արդարացի են կատարելապէս։

Համր եղանակը, ունենալով ինքն ըստ ինքեան որոշ արժանաւորութիւններ, մեր երկրում կատարել է և կատարում է վատ ծառայութիւն և վնասակար դեր կրթական գործի համար։

Եւ ահա ինչու։

Նախ համր եղանակը առաջ է մղվել շատ անպատրաստ իրագործողների ձեռքով և երկրորդ նա ծառայել է իբրև մի միջոց մայրենի լեզուի գործածութեան դէմ։

Եթէ համր եղանակը լինէր միայն մի լրացուցիչ, մի նպաստող և աջակցող միջոց, անկասկած, նա ոչ միայն ընդունելութիւն կը գտնէր բոլորի կողմից, այլ և առանձին քաջալերութեան և խրախոյսի կարժանանար գործնական կեանքի մէջ։ Իսկ նա ընդհակառակը, առաջ բերեց իրականութեան մէջ մի շարք անասելի դժուարութիւններ և պատճառ եղաւ շատ անախորժ թիւրիմացութիւնների։

Այնտեղ, ուր մայրենի լեզուի միջոցով մանուկը շատ ճիշդ կերպով, մի վայրկեանում, կարող կը լինէր հասկանալ մի որ և է բան, ծանօթանալ մի նոր բառի հետ կամ ըմբռնել մի նախադասութիւն, նա հանդիպում էր մի տանջանքի, [illegible] զուր տեղը լարվում էին նրա բոլոր ջղերը, առաջ էր գալիս յոգնածութիւն և վերջի վերջոյ ուսուցման նպատակը մնում էր չիրագործված։

Ուսուցիչը համր եղանակ գործածելով և այն էլ շատ անշնորհք կերպով, մի կողմից ծիծաղելի էր դարձնում ուսուցման այդ միջոցը, իսկ միւս կողմից յետ էր մղում մայրենի լեզուի դերը և նշանակութիւնը, իբրև հակակշիռներ մանկավարժական նոր մեթոդին։

Իսկ եթէ համր եղանակի բարեփոխումները միացած մայրենի լեզուի հետ, գործադրվէին զուգընթաց, այն ժամանակ այդ եղանակի դէմ չէին լսվի տրտունջներ և բողոքներ։

Կան դէպքեր և մեր երկրում, երբ միակ փրկարար միջոցը լեզու սովորեցնելու գործում կարող է լինել համր եղանակը. այդ այն դժբաղդ դէպքերն են, երբ անխուսափելի կերպով անհնար է դարձել մայրենի լեզուի գործածելը։ Երևակայենք, օրինակ, որ տարբական դրպրոցում աշակերտ են դարձել լեզգի, քիւրդ, աստրի, որոնք բացի իրանց մայրենի լեզուից ուրիշ լեզու չը գիտեն, և մի և նոյն ժամանակ չէ ճարվում այնպիսի ուսուցիչ, որ գիտենար նրանց լեզուն. անկասկած, այդպիսի դէպքերում համր եղանակը կարող է որոշ դիւրութիւններ տալ, որոնք ի հարկէ անկարող կը լինեն փոխարինել մայրենի լեզուի յարմարութիւնները, բայց աւելի մեծ արդիւնքներ կը տան, քան նախկին եղանակները, երբ բոլորովին անտես էին առնվում աշակերտների լեզու գիտենալը չը գիտենալը։

Սակայն դրանք բացառութիւններ են և համր եղանակը պէտք է ճանաչվի ոչ պարտաւորական մի գործ և նա չը պէտք է ոչ մի դէպքում խոչընդոտ հանդիսանայ մայրենի լեզուի գործածութեան և ուսուցման դէմ։ Իսկ իբրև լրացուցիչ և աջակից մի միջոց, նա կարող է յանձնարարվել դպրոցական մանկավարժական ժողովներին նկատի ունենալու համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XVI

Վրացի նացիոնալիստների հետ մենք վաղուց ծանօթ ենք, դեռ Վէլիչկօի ժամանակից։ Բայց վերջերս խօսում էին, թէ նրանց օրգանը, «Իվերիա» լրագիրը, անցնելով նոր մարդկանց ձեռքը, կերպա[illegible] անփոխվել է, կորցրել է իր նախկին գոյնը։

Չը գիտենք որքան ճիշդ է այդ խօսքը, բայց Սև ծովի ափերում աշխատող ծխախոտագործների հարցում այդ լրագիրը ցոյց տուեց, որ հին աւանդութիւնները իր համար շատ սուրբ են։ Հայերին ճանաչում ենք, դժուար չէ ճանաչել և որդիներին։

Մի ժամանակ իշխան Իլիա Ճավճավաձէ առատ թանաք և ոչ պակաս առատ կոկորդիլոսեան արտասուքներ էր թափում «Իվերիայի» էջերում, թէ հայերը գողանում են վրաց [illegible] վանքերը, քերելով, ջնջելով նրանց հին արձանագրութիւնները։ Մի ժամանակ էլ նա սկսեց երկար ու բարակ մասլահաթներ, թէ ինչպէս հայոց «գիտնականները» կողոպտում են Վրաստանը։ Իշխանը տաք կոիւ էր մղում հողաղացների դէմ, իսկ Վէլիչկօն ծափահարում էր նրան, անուանելով Սաղարաժօի անպարտելի հերոս։

Այսօր կնեազ Իլիայի ժառանգները նոյն ճիչը, նոյն աղաղակը բարձրացրել են հրապարակում, որովհետև ծխախոտագործներին թոյլ են տուել մի տարի էլ մնալ Սև ծովի ափերում։

Նրանք կը կամենային, որ իշխան Գօլիցինի և Պլեվէի ժամանակ հրատարակված կանոնները իսկոյն կատարվէին, առանց յետաձգումների, առանց ծխախոտագործների աղաչանքները յարգելու, այսինքն առանց թոյլ տալու, որ խեղճերը անցեալ տարվայ իրանց ցանքերը հաւաքեն։

Ինչու այսքան դաժան խստասրտութիւն, ինչու այս աստիճան տմարդի վերաբերմունք դէպի մի անվնաս ժողովուրդ, [illegible] [illegible]ունի արած բացի միայն նրանից, որ ծաղկեցրել է անապատները։

Բանից դուրս է գալիս, որ ծխախոտագործ թիւրքահայերը մեղաւոր են նրանով, որ իրանց գոյութեամբ չեն համապատասխանում վրացի նացիոնալիստների հայրենասիրական հասկացողութիւններին։

Սուխումը, Սօչին, ասում են նրանք, Վրաստանի հողն են կազմում։ Այնուհետև գալիս է Մօնրօէի վարդապետութիւնը — Վրաստանը վրացիների համար։

Շատ լաւ։ Բայց մթթէ թիւրքահայերը ասում են, թէ Սուխումը, Սօչին Վրաստան չեն. մթթէ նրանք դէմ են, որ Սուխումի և Սօչիի հողերում բնակվէին վրացի գիւղացիներ։ Մթթէ նրանք երբ և իցէ յայտնել են, թէ վրացի գիւղացիներից վարձով հող չեն վերցնի և իրանց աշխատանքով նրանց նոյնպէս չեն հարստացնի, ինչպէս այսօր հարստացնում են ռուս գիւղացիներին, որոնցից հողեր են վերցնում վարձով։ Չէ՞ որ թիւրքիացի ծխախոտագործը սեփականատէր չէ, չէ՞ որ նա միայն վարձող է և նրա համար բոլորովին մի և նոյն է, թէ ով կը լինի նրան վարձով հող տուողը՝ ռուս գիւղացին, թէ վրացին։

Մեզ ասում են, որ Բութայիսի նահանգում ազգաբնակութիւնը խեղդվում է սակաւահողութիւնից։ Եւ դա, տարաբաղդաբար, մի դառն, երկինք աղաղակող ճշմարտութիւն է։ Ճշմարտութիւն է և այն, որ սակաւահողութիւնից խեղդվող ազգաբնակութեան հողեր չեն տալիս Սև ծովի ափերում, ուր կան ընդարձակ ազատ տարածութիւններ։ Շատ ցաւալի է այդ։ Բայց արդեօք դրա պատճառը թիւրքահայ ծխախոտագործնե՞ր են։ Եւ կարո՞ղ են վրացի նացիոնալիստները դէթ մի դէպք ցոյց տալ, երբ Բութայիսի սակաւահող գիւղացին մերժում ստացած լինի այն պատճառով, որ նրա խնդրած հողի վրա նստած է ծխախոտագործ թիւրքահայը։

Այդպիսի դէպք չէ կարող լինել, քանի որ Սև ծովի ափերում ծխախոտ մշակող հայերի հողատիրութիւն չը կայ, գոյութիւն չունի։ Այնտեղ կան միայն վարձողներ, և վարձում են նրանք մասնաւոր կալուածատէրերի հողերը, իսկ արքունական և հասարակական հողերը, որոնց վրա կարող են յոյս դնել վրացի գիւղացիները, ազատ են մնում, նշանակված են ռուս գիւղացիների համար։

Ուրեմն էլ ինչու՞ համար են նացիոնալիստական ճիչերը։

Հարց կարող է լինել միայն այն մասին, որ կալուածատէրերը իրանց հողերը ծխախոտագործներին վարձով տալու իրաւունքից զրկվեն։ Բայց դրանից ի՞նչ օգուտ։ Եւ հնարաւո՞ր է այդպիսի մի բան, քանի որ դեռ գոյութիւն ունի մասնաւոր [illegible] փոխանութեան իրաւունքը և իւրաքան[illegible] [illegible]տէր ազատ է իր հողերը շահագործել այնպէս, ինչպէս ինքն է շահաւէտ համարում։

Գուցէ և մասնաւոր հողատէրը առաւելութիւն տար տեղացիներին և իր հողերը նրանց տար վարձով։ Բայց ահա հողատիրոջ դատողութիւնը։ Իշխան Շերվաշիձէն ասում է, որ տեղացիները, ընիկները միայն եգիպտացորենի մշակութիւնն են իմանում։ Եւ ինչ կարող է հարկադրել, որ այդ կալուածատէրը հրաժարվի շահաւէտ ծխախոտագործութիւնից և բաւականանայ եգիպտացորենի տուած փոքր արդիւնքով։ Իրանք նացիոնալիստները, հայրենասիրական եռանդով օձիք պատռողները, կանեն այդպիսի բան, կը սպանեն իրանց բարեկեցութիւնը։

Նացիոնալիստական ճիչերի իսկական անմտութիւնը պարզելու համար, պիտի ասենք և այն, որ Թիւրքիայից գաղթած ծխախոտագործ հայերն ու յոյները բացառապէս Վրաստանի հողերի վրա չեն հաւաքված։ Կուբանի շրջանը, անշուշտ, դուրս է Վրաստանի սահմաններից. այնտեղ ծխ[illegible]խոտ անհամեմատ աւելի քաղաքական մեծ դիրք է գրաւում։ Եւ գաղթականների ահագին բազմութիւնը այնտեղ է ապրում։ Հետևաբար վրացի նացիոնալիստները չեն կարող ասել թէ վախենում են, որ հայերը իրանց ահագին քանակութեամբ կը ճնշեն վրացի ազգաբնակութիւնը, երբ վերջինս տեղեր կը ստանայ Սև ծովի ափերին։

Նացիոնալիստը ամէն տեղ նեղահայեաց, միակողմանի ու սահմանափակ է։ Նրան ամենևին չէ հետաքրքրում երկրի տնտեսական բարգաւաճումը, նրան ոգևորում է միայն ազգայնական կռապաշտութիւնը։ Ամէն տեղ նրան հարկաւոր է քաւութեան նոխազ։ Չը կարողանալով խօսել իսկական դրութեան մասին, չը կարողանալով հողատիրութեան գոյութիւն ունեցող պայմանների դէմ գնալ, վրացի նացիոնալիստները փրկութիւն գտնում են անմեղ ու անպաշտպան հայ գաղթականների վրա յարձակվելով։ Դրանով լուրջ քաղաքական-տնտեսական հարցը չէ լուծվում, այլ միայն նացիոնալիստական խմորի մէջ աւելանում են թթուեցնող նոր ու նոր նիւթեր։

Այդ թթուն գլուխ պատեցնելու, զառանցանքների մէջ գցելու բոլոր յատկութիւններն ունի։ Բայց ի՞նչ ցաւս։ Զառանցանքով ապրողները առանձին հաճութեամբ են թունաւորում իրանց միտքն ու ամբողջ էութիւնը։ Եւ ահա մենք տեսնում ենք վրացի նացիոնալիստների մի խոշոր զառանցանքը, հիմնված նոյն ծխախոտագործների դժբախտ հարցի վրա։

Բայց այս մասին թոյլ տուէք խօսել հետևեալ անգամ։

Լ.

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Ինչպէս երևում է կեանքի անողոք պահանջներից մէկն էլ դրամներին կօմեդիաներ յաջորդելն է։

Մէկը առանց միւսի լաղթ չունի։

Բագուի քաղաքագլուխ Իրեցկին չը կամեցաւ, որ դէթ Բագուի փետրվարեան տրագէդիայից յետոյ տեղի չունենար կօմեդիա։

Կօմեդիա, որին ռուսները кукольная անունն են տալիս։

Կօմեդիայի դերում ինքը պ. Իրեցկին էր՝ անմեղ սիրամարգեան փետուրներով ծածկված և կոկորդիլոսեան արցունքները աչքերին։

Մշակի ընթերցողներին մի շարք թղթակցութիւնից արդէն յայտնի է չարաբաղդ Բագուի պաշտօնական գլխի բռնած դատապարտելի ընթացքը, փետրվարեան կարմիր օրերում։

Յայտնի է նաև Մշակի ընթերցողներին Բագուի քաղաքային վարչութեան ծառայողների միաձայն կազմած դատապարտութիւնը՝ իրանց գլխի յանցաւոր ընթացքի մասին։

Դրանից յետոյ էլ լռել։

Անկարելի էր։

Եւ չը լռեց մեր պ. Իրեցկին։

Ահա մի քանի օր է, ինչ լուր էր բաց թողել, թէ ինքը հեռանում է պաշտօնից։

Խօսում էին, որ այսօր կամ վաղը նա դումայի նիստում հրաժեշտ կը տայ քաղաքի հայերին։

Եկաւ երեքշաբթին՝ դումայի նիստի օրը, անցաւ երեկոն խաղաղ և թէև պ. Իրեցկին ոչ մի հիմք չունէր կարծելու, թէ նիստի շարունակութիւնը անպատճառ տեղի կունենայ հետևեալ օրը, նա այդ օրը ոչ մի խօսք չը բացեց իր «բարի երթի» մասին։

Մինչև այդ, մասնաւոր կերպով ամէն ինչ պատրաստվում էր։

Չորեքշաբթի օրը տեղի ունեցաւ նիստի շարունակութիւնը՝ ներկայութեամբ մշտապէս յաճախող ձայնաւորների և «զակազով» յաճախող ձայնաւորների։

Նոր էին անցել հերթական հարցերին, երբ ձայնաւորներից մէկը հարց տուեց պ. Իրեցկուն։

—Ճիշտ է, որ դուք թողնում էք ձեր պաշտօնը, Կոնստանդին Ալէքսէեվիչ։

—Այո, դժբաղդաբար ճիշդ է,—բացականչեց նա։

Էլ ինչ ասես, որ չասեց վիրաւորված, անպատված քաղաքագլուխը։

Ես ձեր մէջ ապրում եմ ահա 40 տարի և բացի բարի, անբիծ անունից (?!) ոչինչ չեմ վաստակել։ Մի ոտս արդէն գերեզմանումն է։

—Ես պատկանում եմ ռուս հասարակութեան ամենաազատամիտ դասին։

—Ես երկրպագում եմ ռուս ամենաառաջադէմ հասարակութեան բերան «Сынъ Отечества» և նման օրգաններին։

Եւ ահա այդ իսկ օրգանում իմ գլխին թափեցին լուտանքների տարափ։ Ես խայտառակված եմ ամբողջ ռուս հասարակութեան առաջ։

—Անարգ սուտ է,—լսվում է ձայնաւորների միջից։

—Սուտ է,—ձայնակցում են մի քանիսը։

Շարունակում է Իրեցկին։

—Մի ամիս առաջ տեղական «Бак. Из.» լրագրում նրա խմբագիր Կ. Պոնոմարեվը ինձ մեղադրեց նոյն բաներում և յայտարարեց, որ ես էլ իմ անգործութեամբ աջակցում եմ ոստիկանութեան բռնած (Պոնոմարեվի ասելով) անարգ ընթացքին։ Եւ որովհետև այդ լրագիրը հայկական օրգան է, դրա համար էլ ես կարծում եմ, որ նրա խմբագրի բերանով ինձ դատապարտում է ամբողջ հայ հասարակութիւնը (!!!)։ Ինձ մեղադրում են իմ ծառայողները, իբր թէ ես հայերին թուրքերի և թուրքերին հայերի դէմ եմ գրգռել...

—Անարգ սուտ է—գոչում են ձայնաւորներից (պէտք ասել, որ ծառայողները իրանց մեղադրանքում այդպիսի բան չեն ասում)։

—Ապա թողէք ինձ,—շարունակում է Իրեցկին,—(կարծես թէ մէկը նրա փեշից բռնել էր), հեռանում եմ պաշտօնից, որ կարողանամ պատասխանատուութեան ենթարկել դատարանի միջոցով ինձ մեղադրող խաբեբաներին...

Տպաւորութիւնը հիանալի էր։

Ես չեմ խօսի ձայնաւորների ասելիքների մասին, ինչպէս և պ. Անտոնեանի ճառի մասին, որի մէջ յայտնելով թէ ինքը հայ է և «Бак. Из.» հայ հասարակութեան օրգան չէ,—խնդրեց դուսային՝ անմեղութեան և արդարութեան վկայական տալ իրանց քաղաքագլխին։

Որոշվեց դուսայի այդ արձանագրութիւնը կարդալ հետևեալ նիստում և պատճէնը ուղարկել «Сынъ Отечества» լրագրի խմբագրութեանը։

Այնուհետև տեղի ունեցաւ պ. Իրեցկու զրգացված խոնարհ շնորհակալութիւնների շարանը և այդպիսով «40 տարի մեր մէջ ապրած և անեղծի կերպով խայտառակված ու անպատված պ. Իրեցկին» մի աւելորդ անգամ էլ վաստակեց «անբիծ եւ բարի» հասարակական գործիչի անունը։

Հարկաւոր են կոմմենտարիաներ։

Ռ. Յովհաննէսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Ախալցխա, ապրիլի 22-ին

Կը խնդրէի երկտող տպագրել տալ հաճէիք «Մշակում», ցրելու մի թիւրիմացութիւն, որ լոյս էր տեսել «Մշակի» սոյն տարվայ 52-րդ համարում (անտարակոյս լրատուի կողմից) մեր քաղաքացիների կազմած համախօսականի մասին յանուն Վեհափառ Հայրապետի նուաստիս եպիսկոպոսացման վերաբերեալ՝ մնացպես Ախալցխայում մնալու պայմանով։ Հետաքրքրվելով հաւաստիացայ ատուգապէս՝ նոյն իսկ պ. քաղաքագլխից, որ մարտի 17-ին Նորին Սրբութեան առաքված դոյն այդ իմաստով համախօսականի մէջ և ոչ մի այդպիսի պայմանական իմաստ տեղի չէ ունեցել, և չէր էլ կարող ունենալ մի այդ օրինակ բռնաբռնաառաջարկ, այն ևս բանիմաց հանրութեան կողմից։

Առաջնորդական փոխանորդ Ախալցխայի՝
Սիոն վարդապետ

II

Թաւրիզ, ապրիլի 2-ին

«Մշակի» անցեալ տարվայ 256-րդ համարում Թաւրիզից գրված թղթակցութեան մէջ պ. Մ. Ս. հարցրել էր թէ ո՞ւմ մօտ են գտնվում հ. Ղ. Ալիշանի յիշատակին հանգանակված դրամները, թէև ինքը լաւ գիտէր։

Հայր Ղ. Ալիշանի յիշատակին հանգանակված դրամը ոչ թէ 200 թուման էր, ինչպէս պ. Մ. Ս. է ասում և ոչ էլ 100, ինչպէս հայր Մուրադեանն է գրում, այլ 80 թուման։ Այս գումարից 9 անձինք չը վճարեցին 25 թուման։ Վենետիկ ուղարկած հեռագրին վճարված է 9 թուման 6 դրան, հայր Մուրադեանի մօտ մնում է 13 թուման, իսկ մնացած մօտ մօտ 31 թումանը իմ մօտ։ «Սարը երկնեց և մուկ ծնաւ» չէ՞։

Վ. Բժշկեան

III

Բօստով, ապրիլի 26-ին

Փարիզից գրում է ինձ մէկ արժանահաւատ անձ. «Այստեղ մէկ տղայ կայ, որ իր ընդունակութիւններով ֆրանսիացոց ուշադրութեանը արժանացած է, կոտորածներից ազատված է, երկու օր դիակների վրայով անցած է, անցեալ տարի ուսուցչական վկայագիր ստացած է, այս տարի պէտք է մտնի բժշկական համալսարանը, իրան օգնել պէտք է գոնէ մէկ, առ առաւելն երկու տարի։ բարերարի երախտիքը արժանապէս կը գնահատէ և իր կարգին չունևոր հայ ուսանողներին կօգնէ, երբ կեանքի մէջ մտնէ»։

Յատուկ աղերսում եմ ինքնաճանաչ բարեսիրտ ունևորներին օգտվել այս հազուագիւտ դէպքից յագուրդ տալու համար իրանց վսեմ հոգեկան պահանջին։ Հայկական առածն ասում է «Աստծու պահած գառը գէլը չի ուտի» և եթէ այդ տղան սրի և կոտորածի միջից անցնելով, այսօր կարողացել է հասնել իր ներկայ վիճակին, ձեռք մեկնեցէք տղային հասնելու վերջնական նպատակին։

Ցանկացողներին խնդրում եմ դիմել ինձ այս հասցէով՝ Ростовъ н/д. д-ру Баграту Абрамовичу Навасардіанъ.

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լուր է պտտում, որ Կովկասի փոխարքան Թիֆլիս հասնելուց յետոյ կայցելէ Սիօնի մայր եկեղեցին, այնտեղից կը գնայ Վանքի մայր տաճարը, և մահմեդականների մզկիթը։ Տեսնվում են պատրաստութիւններ փոխարքային արժանավայել ընդունելութիւն անելու համար։—Ասում են, որ մայիսի 3-ին Երևանից Թիֆլիս է գալու մահմեդական պատգամաւորութիւն՝ փոխարքային դիմաւորելու համար։ Շէյխ-ուլ-իսլամը հրաւիրել է Շուշու գաւառական դաղիին, նոյն նպատակով։

—

Ապրիլի 29-ին Պետերբուրգից արտակարգ գնացքով Թիֆլիս ժամանեցին Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Ն. Ա. Սուլթան-Կրիմ-Գիրէյը և Կովկասի ոստիկանութեան գլխաւոր գեներալ-մայիոր Ե. Ն. Շիրինկինը։ Նրանց հետ ժամանեց նա և փոխարքայի դիւանի գլխաւոր գեներալ-մայիոր Տրոֆիմովը։ Կայարանում նրանց դիմաւորեցին բազմաթիւ պաշտօնեաներ և Թիֆլիսի քաղաքագլուխը։

—

Ինչպէս յայտնի է, ապրիլի 13-ից սկսած Թիֆլիսի էլէքտրաքարշի աշխատաւորները գործադուլ են արել և մինչև օրս դեռ ևս չէ աջողվում բէլգիական անօնիմ ընկերութեան և գործադադարների միջև մի համաձայնութիւն կայացնել։ Այժմ երկու կողմերի էլ փոխադարձ համաձայնութեամբ որոշված է դիմել միջնորդ դատարանի, որի վճիռները պարտադիր են լինելու երկու վիճող կողմերի համար էլ։ Գործադուլ անողները խօսք են տուել հպատակվելու միջնորդ դատարանի վճռին և մայիսի 2-ից, երկուշաբթի օրվանից վերսկսելու աշխատանքները, սպասելով այդ վճռին։ Իսկ անօնիմ ընկերութեան կառավարիչը և Բրիւսսէլից եկած լիազօրը խօսք են տուել ենթարկվելու նոյն դատ սրանի վճռին, եթէ կենտրոնական վարչութիւնը տայ իր համաձայնութիւնը։ Այդ վարչութեան համաձայնութիւնն առնելու համար արդէն հեռագրով դիմված է Բրիւսսէլ։ Ուրեմն, կարելի է յուսալ, որ Թիֆլիսի ազգաբնակութեան չունևոր ահագին մեծամասնութիւնը շուտով կազատվի ոտով 3—10 վերստ գնալ-գալուց։

—

Ապրիլի 29-ին Թիֆլիսի դատաստանական պալատում քննվում էր Իսահակ Ժամհարեանի սպանութեան գործ։ Մեղադրվողներից պարսկահպատակ Գրիգոր Վարդանեանը և Ամերիկահպատակ Կարապետ Եղիշեանը փախած լինելով, նրանց գործը դադարեցված է։ Մեղադրվածներից Մինասեանի և Ամիրեանի, նոյնպէս և արդարացված Ս. Մարգարեանի գործը վերաքննվեց։ Պաշտպանում էին Մոսկվայի երդուեալ-հաւատարմատարները—պ. պ. Ստասլը և Տեսլենկոն։ Նիստը դռնփակ էր։

—

Ստացանք Բագուի աղէտի զոհերի օգտին 1) Գանձակից Շմաւոն քահանայ Բորեանի ձեռքով հաւաքած իր ծխականներից 60 ռուբլի, 2) գործակալ Ղազախու Բ. Մ. Յովհաննէս քահ. Տէր-Խաչատրեանից 17 ռուբլի 50 կոպ. 3) Եղբ. Զիբուխչեաններից 3 ռուբլի։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 27843 ռուբլի 52 կոպ.։

—

Ստացանք Զխար գիւղի հրկիզեալների օգտին Գանձակից Շմաւոն քահ. Բորեանի ձեռքով իր ծխականներից հաւաքած 37 ռ. 50 կ.։

—

Անցեալ օրը քաղաքային տան դահլիճում, քաղաքագլխի և անօնիմ ընկ. ներկայացուցիչների ներկայութեամբ կայացաւ էլէկտրական քարշակի ծառայողների ժողովը։ Ծառայողների և անօնիմ ընկերութեան ներկայացուցիչների մէջ չը կայացաւ համաձայնութիւն և ծառայողները ցրվեցին, նախապէս վճռելով գործի չը գնալ մինչև պահանջները չը կատարվեն։ Նրանք այժմ պահանջում են (քանի որ իրանց ներկայացրած պահանջները չեն կատարվում) վճարել նրանց հասանելիք գումարները։ 1) պայմանի համաձայն ծառայողներին արձակելիս տալ երկուշաբթվայ վարձ, 2) 18 օրվայ աշխատանքի վարձը, 3) գործը դադարեցնելու օրից մինչև ժողովը կայանալու օրը վարձատրութիւն, 4) նրանցից վերցրած բոլոր տուգանքները յետ տրվեն, 5) շորերի համար յետ դրած գումարները, և 6) էլէքտրական քարշակը շինելիս այն ծառայողները, որոնք բանում էին և որոնց խոստացված էր 1/2 ամսվայ ռոճիկ տալ և այդպիսով հեռացնել։ Անօնիմ ընկ. ներկայացուցիչը հաստատեց բաւարարութիւն տալ 5 կէտին բացի մէկից, այն է՝ այս քանի օրվայ չը բանած օրավարձերը։ Համաձայնութիւն չը կայացաւ և ծառայողները ցրվեցին այնպէս որ յայտնի չէ թէ քարշակը երբ կը սկսի բանել։

—

Ապրիլի 28-ին Շուշուց հազիւ 4—5 վերստ հեռաւորութեան վրա անյայտ չարագործներ սպանեցին Աղդամի շրջանի պրիստաւ Շուամակեվիչին։ Պրիստաւը քաղաք էր եկել ռոճիկ ստանալու։ Սպանվածի հետ եղած երկու սարաժնիկները, որոնցից մէկը ձեռքին վէրք է ստացել, փախել են։ Սպանվածի դիակը նոյն օրը տարել են Շուշի, իսկ սպանողներն անյայտացել են։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Այս բոլէիս, պահապանների խիստ հսկողութեան տակ, երկաթուղով Փօթիից Բութայիս բերին 70 հոգի յանցաւորներ, որոնք մասնակցել էին Մինգրելիայում եղած խառնակութիւններին։ Նրանց մէջ մօտ 20 հոգի գիւղացի կանայք են։ Բոլոր ձերբակալուածներին տեղաւորեցին Բութայիսի կենտրոնական բանտում։ Առհասարակ վերջերս երկաթուղով յաճախ են բերում այստեղ ձերբակալվածների խմբեր և բանտարկում կենտրոնական բանտում։ Շնորհիւ գեներալ-նահանգապետ Օրբելիանի ձեռք առած միջոցների և երեք աւազակային խմբերի ջնջման, քաղաքումս հանգստութիւնը կատարեալ է։ Միայն գիւղացիներից շատ քչերն են քաղաք գալիս, վախենալով ճանապարհին չենթարկվել կողոպուտի։ Այդ պատճառով կենսական մթերքների գները շատ թանգացել են։ Երկու շաբաթ է, որ Բագուից ապրանքատար գնացքներ չեն գալիս»։

—

ՄԵՐՎԻՑ մեզ գրում են. «Կիրակի, ամսոյս 10-ին, երեկոյեան ժամը 8-ին, երկու անյայտ չարագործներ մտնելով «Նադեժդա ընկերութեան» գրասենեակը, ուր բացի ագենտից այդ րոպէին ոչ ոք չը կար, պահանջում են կասսան։ Ագենտը մերժում է, չարագործները չը կարողանալով հասնել իրանց նպատակին, կրակում են ատրճանակով երկու անգամ ու անյայտանում։ Գնդակներից մէկը բարեբաղդաբար չէ դիպչում, իսկ միւսը ծանր վիրաւորում է։ Ագենտը կարողացել է մի այն խմանալ, որ չարագործները ռուսներ էին»։

—

ԱՐԴՈՒԻՆԻՑ մեզ գրում են. «Զատկին այստեղ չը տեսնված ցրտեր արին. ծերերից շատերը չեն յիշում այս տեսակ ցրտեր ապրիլի մէջ։ Մինչև այսօր էլ եղանակը անձրևային է և գիշերները շատ ցուրտ է։ Եթէ մի քանի օր էլ այսպէս շարունակվի, ծառերը բոլորովին կը մրսեն։ Ճորոխը բաւականին յորդացել է, նաւագնացութիւնը սկսում է վտանգաւոր դառնալ, բայց բարեբաղդաբար դժբաղդ դէպքեր քիչ են պատահում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

II

Տասն և ութերորդ դարի վերջերից սկսած Չլատվում է Թիւրքիան։ «Հիւանդ Մարդու» հսկայական մարմնից պատառվեցին և անկախ դիրքեր ստացան Սերբիան, Ռումինիան, Բոլգարիան, Արևելեան Ռումելիան, Յունաստանը, մասամբ Բոսնիա-Հերցեգովինան, Աթոս Լեառը, Լիբանանը, Կրէտէն և Եգիպտոսը։ Բացի Եգիպտոսից, մնացած բոլոր անկախացած ազգութիւնները մինչև օրս քրիստոնեայ են եղել։ Եւրոպական պետութիւնների էլ քաղաքականութիւններն այդ ուղղութիւնով են ընթացել մինչև օրս։ Նրանք միշտ աշխատել են Թիւրքիայի լծից ազատել քրիստոնեայ հպատակ ժողովրդներին և յետոյ էլ նրանց կալուածները կամ երկիրներն ընդարձակել։

Իսկ այժմ տարբեր երևոյթ է սկսվում արաբական ապստամբութիւնով։ Իսլամն է այժմ պառակտվում։ Մահմեդականութեան թէօկրատական աշխարհայեացքը փուլ է գալիս։ Արաբների ապստամբութիւնը մի մահացու հարուած է համիսլամական գաղափարին։ Նա ցոյց է տալիս, որ մահմեդական ժողովուրդներն էլ կարող են իրանց անկախ շահերն ունենալ, անկախ ազգութիւններ կազմել։

Այդ բանի վրա կասկածում էին համիսլամականները, թէ և գիտութիւնը վաղուց դա համարում է ամենքին յայտնի ճշմարտութիւն։

Ինչպէս են նայելու մեծ պետութիւնները արաբների անկախութեան ձգտումին, դեռ գուշակել չէ կարելի։ Միայն եթէ նրանք թողնեն իրերն իրանց բնական ընթացքին, հետևեալ գլխաւոր հետևանքներն են ծագելու ճակատագրաբար։

Թիւրքիան, որ արդէն ֆրանսիական փոխադրանաւեր է վարձում Եմէն զօրք տեղափոխելու, բնականաբար պէտք է թուլանայ Մակեդոնիայում։

Այնտեղ՝—Ուսկիւբի, Մոնաստիրի, Ադրիանոպօլսի արիւնոտ շրջաններում արդէն ընդհանուր ապստամբութեան հոտը փչում է։ Ցոնչեղներ, Սարաֆօղներ և ուրիշ հերոսներ արդէն սկսում են նորս խուժել։

Թիւրքիան ստիպված է լինելու քաշել Անատոլիայից իր զօրքերը։ Իսկ դրանից ինչեր կարող են ծագել հայկական վիլայէթներում, ուր յեղափոխականների դաշնակցութիւնն ունի բաւական պատկառելի դիրքեր, այդ ևս գուշակելն առ այժմ անկարելի է։

Հեռու չէ արդէն այն վարկեանը, երբ Թիւրքիան վռնդվելու է Եւրոպայից, երբ նա դառնալու է զուտ ասիական մի փոքրիկ ու բարբարոս պետութիւն։

Արաբների ապստամբութիւնը գալիս է արագացնելու այդ փրկարար բօղէն արիւնքամ ու հերոսների աշխարհ Մակեդոնիայի համար։

Միւս կողմից արաբական շարժման կենտրոնական օրգանը Կահիրէում պարզապէս հրատարակել է, որ արաբների ձգտումն է կազմել մի սահմանադրական պետութիւն՝ եւրոպական մտքով։ Դրանից պարզ կարելի է եզրակացնել, որ այդ կազմակերպութիւնը նախ ազդված է Եւրոպական լուսաւոր գաղափարներից, երկրորդ, որ նա կապ ունի որ և է եւրոպական պետութեան հետ։ Իսկ թէ ո՞րն է այդ կապ ունեցող պետութիւնը, ամենայն հաւանականութեամբ երևի Անգլիան։

Մենք չենք հաւատում, որ Անգլիական կառավարութիւնը իրական մասնակցութիւն ունենայ ապստամբութեան գործում, բայց համոզված ենք, որ նա բարեհաճ լուռիւն է պաշտպանել։ Այն ինչ նոյն պետութիւնը Կիպրոսում 1897 թւին Հայ Յեղափոխական Դաշնակցականների զէնքերն էր գրաւում, նրանց գործողներին բանտարկում, որ արգելէ Կիլիկիայում նրանց գործողութիւնները։

Գերմանիան, որ տզրուկի նման կպել է Թիւրքիայի մարմնին և դիմում է դէպի երկրի ներսը. որ առանց մի կաթիլ արիւն թափելու գրաւում է երկրի բոլոր արդիւնատու ձեռնարկութիւնները,—անպատճառ բարի աչքով չէ նայելու Թիւրքիայի այդ նոր անդամահատութեան սպառնալիքին։

Բայց Անգլիան, որ արդէն համարեա դուրս է վանված Թիւրքիայի ներքին նահանգների հսկայական ձեռնարկութիւններից, որ զգում է Գերմանիայից գալիք վտանգը իր հնդկական երկիրների և նրանց առևտրի համար, եթէ Գերմանիան հասնի մինչև Պարսից ծոցը,—ահա այդ Անգլիան չէ կարող չօգնել արաբական ապստամբութեանը, չէ կարող չը ջանալ պատնէշներ քաշել մի կողմից գերմանական, միւս կողմից ռուսական միտումներին դէպի Միջերկրական ծովը և Հնդկական օվկիանոսը։

Թիւրքիայում պատրաստվում են լուրջ ու վճռական երևոյթներ։

Խաժակ

ԵԱՊՕՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Ամենքը գիտեն, որ Եաւոնական սահմանադրական պետութիւն է, որ յդ արհամարհված, քամահրված «ժակա»-ները, իրանց երկրի ճակատագիրը չեն յանձնած մի անկարող «բիւրօկրատիայի» կամայականութիւններին։ Բայց այդ սահմանադրութիւնը ինչպէս է հիմված,

ովքեր են նրա գործաւորները։ Առ հասարակ, ծանօթ է այն իրողութիւնը, թէ եապօնական սահմանադրութիւնը հաստատվել է ներկայ միկադոյի, Մուցուհիտոյի ջանքով և նախաձեռնութեամբ։ Բայց թէ ո՞վ է եղել նրա հայրը—շատ քիչերին յայտնի է։ Նա կոչվում է մարկիզ Իտո։ Այս պետական գործիչի դէմքը գուցէ ամենից նշանաւորն է, որ արտադրած լինի Արևելքը մի դարից ի վեր։ Եւ սակայն նրա անունը համբաւութեան քօղի տակ է ծածկված։

Երևակայեցէք մի ալեզարդ ծերունի՝ խորշոմած ճակատով, մշտաղուարթ դէմքով, որ ամեն անգամ ժպտալիս, դժգոյն շրթների միջից երևան է հանում սպիտակ ու սուր ատամների մի շարք, ոսկի ակնոցների ետևից փայլող, հետախուզող աչքերով, որոնք անդադար շարժվում են, կարծես որոնելու, գտնելու և արձանագրելու համար իրանց շուրջը կատարվող ամեն բանը։

Քսան տարեկան՝ նա մասնակցում էր արդէն իր երկրի կառավարութեան։ Այժմեան միկադոյի հայրը՝ Կօմէի Տէննօ ծերունի կայսրը, որ շատ էր սիրում Իտոին, մի առաւօտ, կանչում է նրան իր մօտ, պալատ։

—Դու, ասում է նրան, պետական գործիչ դառնալու խոշոր ընդունակութիւններ ունես և գուցէ լինես Եապոնիայի մեծագոյն նախարարը, մինիստրը... Բայց դրա համար պէտք է որ կրթվես։ Ամեն բանից առաջ ծանօթացիր Եւրոպայի հետ...

Կայսերական գանձի ծախքով նրան ուղարկում են անմիջապէս Անգլիա, մի ուրիշ նշանաւոր եապօնացու, կոմս Ինուէի հետ։ Նա այնտեղ մնում է տասնըհինգ ամիս, և այդ ժամանակի ընթացքում ուսումնասիրում է երկրի լեզուն և հաստատութիւնները. դիտում է մարդկանց, իրերը և նաւերը—մանաւանդ նաւերը... Տասնևհինգերորդ ամսի վերջին՝ նա վերադառնում է Արևելք, և գտնում է Եապոնիան պատերազմի մէջ։ Հայրենիքի հողի վրա դեռ ևս ոտք չը կոխած՝ ճանապարհին, իբրև պարզ նաւաստի, բարձրանում է մի եապօնական նաւ և մասնակցում այն նաւային կռիւին, որ տեղի ունեցաւ Սիմօնօսակիի պարիսպների տակ. յետոյ նաւաստիի դէսյին կռիւն

մի, 53 միլիոն ֆունտ ստերլինգ։ Բալֆուրի յայտարարութեան տրամաբանական հետևանքը լինելու է այդ ահագին ծ. խբի կրճատումը։

ՏՈԿԻՈ։ Պաշտօնական։ Երկու գունդ հետեւակից, 5 հարիւրեակ հեծելազօրից, և մի բատարէայից բաղկացած ռուսական մի զօրաժաս, մօտենալով Նանշանխէնցզիի կողմից, ապրիլի 27-ին յարձակվեց Ինդէնչէնի վրա՝ արտիլերիական զօրեղ կրակով պաշտպանված։ Կռիւ չափազանց տեղական ու կատաղի էր։ Այդ ժամանակ եապօնացիները, առաջ արշաւելով, յետ մղեցին ռուսներին, որոնք կորցրին մօտ 60 սպանված և 160 վիրաւոր։ Եապօնացիներն ունեցան 1 սպանված 50 վիրաւոր։ Բացի այդ դէպքից, դրութիւնն անփոփոխ է։ Մանաւոր աղբիւրից հաղորդում են, որ ռուսների յարձակման նպատակն էր զօրեղ խուզարկութիւն անել եապօնական ծայրագոյն աջ թևի կողմում։ Եապօնացիներն այդ դէպքի ժամանակ խլել են 30 հրացան։ Ռուսները նահանջելիս այրում էին լեռների մացառներն, իրանց նահանջն ապահովելու համար։ Հրդեհին օգնում էր զօրեղ քամին։ Ասում են, որ ռուսների նպատակն էր Տունդզան։

ԼՕՆԴՕՆ։ Հաղորդում են, որ ռուս կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել Օդեսայից նշանաւոր քանակութեամբ ուտելու պաշարներ ուղարկելու։

ՆԻԿՕԼԱԵՎՍԿ։ Ծովային շրջաններում կարծում են, որ Բօժէստվենսկին այդ կէտն է ընտրել իր համար իբր գործողութեան հիմք։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ
Մանանգէտ միջային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20.
(Ե. հ. շ. կ.) 4—30

Դ-ր Վ. Արծրունի
Մեկնում է Կովկասեան Հանքային Ջրերը—Պեատիգօրսկ, որտեղ կընդունէ հիւանդներին Բկի, Քթի ու Ականջի հիւ. համար Пятигорскъ. Верхній бульв. д. кн. Гирей. չ. ո. կ. 2—10

Բժիշկ Ա. Մխիթարեանց
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, սորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դեղատան կից։ (ա. օ.) 65—80

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
Պատմական վէպ
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ։
Ծախվում է 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը, 2) Թիֆլիսի գրավաճառանոցներում։
Գրավաճառները և գումարով գնողները զիջում կը ստանան, եթէ դիմեն ուղղակի հեղինակին։

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ
Ս. Գ. Շերվազանեանց
Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, լուսանկար Լալայեանցի բնակարան։

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Կը վերադառնայ արտասահմանից Պետերբուրգ մայիսի 10-ին և այդ ժամանակից կը սկսէ իր ընդունելութիւնը։ Հասցէն՝ Ելիզավետինսկի փողոց, ռուսաց մայր եկեղեցու յետև, տուն Արխիպովի։ (ռ. ե.)

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԻՈՐԳԻԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր։
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (Ե.հ.) 78—100

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
I
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ռուսերէնից հայերէն
Տպված է 7 պրակ։ Տպագրութիւնը կաւարտվի սեպտեմբերին։ Բաժանորդագրին ճանապարհածախսով 7 ր., կազմով 8 ր.։ Զիջումով ստանալ ցանկացողները թող շտապեն մինչև տպագրութեան աւարտումը բաժանորդ գրվել։
II
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
հայերէնից ռուսերէն
Տպված է առաջին պրակը։ Բաժանորդագրին 5 ր., առաջին բառարանիս բաժանորդների համար 4 ր.։ Գաւառներից ուղղակի դիմել հեղինակին հետևեալ պարզ հասցէով. Тифлисъ, А. С. Дагбашяну. Թիֆլիսում գրվել «Գուտենբերգ» գրախանութում։ (շ. կ.) 2—2

Բացված է
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
լոյս տեսնող
պատկերազարդ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ
XIII և XIV գրքերի
բաժանորդագրութիւնը
Բաժանորդագինն է 3 ռուբլի։
Լոյս է տեսել XII գիրքը, որ առանձին արժէ 2 ր. XI գրքի հետ՝ 3 ր.։ Նախորդ բոլոր գրքերը վաճառվում են խմբագրատանը բաժանորդագրական գնով։
Դիմել՝ Ерванду Лалаянцъ, Саперная 5 կամ Семинарія Нерсесянъ, Тифлисъ.
(Կ. Ե. հ.) 10—10

Լոյս տեսաւ
Մեսրոպ վարդ. Տէր-Մովսիսեանի
ԷՋՄԻԱԾԻՆ և ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
Գինը 1 ռուբլի։
Վաճառվում է Թիֆլիսում, «Գուտենբերգ» գրավաճառանոցում և Էջմիածնում, հեղինակի մօտ։ 4—5

Կովկասում տպագրական գործով զբաղված անձանց փոխադարձ օգնութեան ընկերութեան
ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
գտնվում է Թիֆլիսում, Տուրգենէվսկայա փողոցի վրա, № 11 տան մէջ, և բաց է կիրակի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը։
5—10

Լոյս տեսաւ ռուսերէն լեզուով
РАЗСКАЗЫ А. АГАРОНЯНА
съ біографическимъ очеркомъ и портретомъ автора, въ переводѣ А. Генджіанъ, ц. 30 к. Գումարով գնողներին 30% զիջում. Դիմել՝ Армавиръ, Куб. об. Т. д. Анпетковъ, Унановъ и А. Генджіанъ. 4—4

Ուրբաթ, մայիսի 6-ին
ԹԻՖԼԻՍԻ ԱՄԱՐԱՑԻՆ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
յօգուտ
Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան
լինելու է
ԶԲՕՍԱՆՔ
և բարեգործական վաճառք հետևեալ ծրագրով.
I
ԶԱՆԳԻՒԼՈՒՄ
5-ից 6 ժամ։
II
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ—1) Լուրիկ, 2) Վարդ կոշիկս, 3) Զան գիւլում։
III
ՀԱՐՍԱՆԵԱՑ ՀԱՆԴԷՍ ՀԱՅ ԳԻՒՂՈՒՄ
7—8 ժամ։
Հայկական պարեր—1) Զիմ վզին. 2) Լէպո, լէ, լէ. 3) Յետ ու առաջ. 4) Ուզուն դարա. 5) Լէզգինկա, 6) Օյ, Նազան եմ. 7) Դուն արագիլ։
Մասնակցում են. պ. Մ. Կարա-Մուրզայի խումբը, աշուղ Զիւանին, Բագուի սազանդար «Աբսէն և Ավանէսը» զուռնայի և գինուորական երաժշտական խումբը։
Մանկական խաղեր և պարեր։
Սկիզբն է ժամը 12-ին կէս օրվայ։
Մուտքն արժէ 40 կ., երեխաներից—20 կ. Եթէ անձրևային եղանակ լինի, զբօսանքը յետաձգվում է։
(Կ. ո.) 1—2

ՎԷՏՑԵԼԻ ԹԱՏՐՕՆ
Կիրակի, մայիսի 8-ին
Պ. ՄԱՐԻԿ
կը ներկայացնէ սեփական բեպէրտուարից առաջին անգամ
ՍԱՏԱՆԱՆ
դրամա 2 գործ. հեղ. Մարիկի
ԵՎ ԵՐԿՐԸ
ՄԿԻՃԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ
Պիէսա 1 գործ. հեղ. Ա. Աբէլեանի
Սկիզբն է ճիշդ 9 ժամին երեկոյեան։
Տեղերի գները 3 ր. մինչև 30 կ.
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ «Լև» ծխախոտի խանութում (Գօլովինսկ պր.), իսկ ներկայացման օրը Թատրոնի կասսայում։
(1, 5, 8) 1—3

ԱՂԱԶՈՒՄ ԵՆՔ
տեղեակ անձանց յայտնել մեզ փնտչի Էրզրումի Քրի գաւառի Սեղանք գիւղացի Մարտիկ Յակովբեան Պարոյեանցի (35 տար.) ուր գտնվելը, որը 1903 թուի օգոստոսի 10-ին 2 Արշակ և Միսաք ընկերներով անցել է Օլթիից սահմանը դէպի հայրենիք, սակայն Շիպակ գիւղում տաճիկ կառավարութիւնը բռնելով տարել է Էրզրում, որտեղից յետ են քշել դէպի ռուսաց սահմանը և բերելով մինչի Բաշգիւղի մօտերքը չէ իմացվում ինչ են եղել, նրանց մասին ոչ մի տեղեկութիւն չունենք ոչ մեր և ոչ նրանց ընտանիքը. մեր հասցէն՝ Кизляръ, въ пекарню Мартикъ Аковбяна.
(ա. օ.) 3—10

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

9/22-ին մայիսի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «Danube» շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսօն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քալամաթա, Մարսէյլ, Հավր և Լօնդոն։
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները՝ մինչև Պարիզ, Նոյնպէս և մինչև Շանղհայ (Չինաստանում), կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեանս Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում, թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

Թիֆլիսի Գործակատարների Փոխադարձ օգնութեան ընկերութեան Վարչութիւնը
Տեղեկացնում է պ.պ. անդամներին, որ ընկերութեան բժիշկներն են.
1) Վ. Մ. Արծրունի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների համար։ Գանձակի փողոց։
2) Տ. Գ. Գէորգբէկեան, աչքի հիւանդութիւնների համար։ Վէլիամինովսկի փողոց։
3) Ս. Ս. Իստամանով, վեներական և կաշի հիւանդութիւնների։ Բէբուտովսկի փող.։
4) Լ. Ի. Քամսեվ, վեներական և կաշի հիւանդութիւնների համար։ Միքայէլեան փողոց։
5) Ա. Գ. Կարապետեանց, ներքին և մանկական հիւանդութիւնների համար։ Միքայէլեան պր. № 94։
6) Ի. Զ. Ուսիկեան, ներքին և մանուկների հիւանդութ. համար։ Գանձակի փ. № 29.
ԱՏԱՄՆԱԲՈՑԺՆԵՐ
7) Կլեբանովի Գ. Ս., Ելիզավետինսկի փողոց։
8) Ա. Ա. Մայսուրեանց, Վէլիամինովսկի փողոց։
Բժշկական օգնութիւնից օգտվելու կանոնները կարելի է ստանալ ընկերութեան Վարչութեան գրասենեակում, Գանձակի փողոց, տուն Փրիդոնովի։ (Կ.) 2—3

Կիրակի, մայիսի 8-ին, առաւօտեան ժամը 10½-ին Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում կայանալու է
Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան
ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԸ
Ժողովի զբաղմունքի առարկաներն են.
1) Այժմեան կանոնադրութեան փոփոխումը։
2) Բարեգ. ընկերութեան 2 ճաշարանի և յանուն Յով, Խուդադեանի որբանոցի 1904 թ. հաշիւները և նոյն հաստատութիւնների նախահաշիւները։ (Որբանոցի նախահաշիւի վերաբերեալ վարչ. անդամ Ա. Մէլիք-Այվազեանցը ինց առանձին կիրծիքի և խնդրեց վարչութեան առաջարկել ընդ. ժողովին իր կազմած նախահաշիւը ի քննութեան)։
3) Վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը։
4) Վարչութեան 3 անդամների, 3 փոխանդամների և վերաստուգող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը։ (ա. օ.) 1—6

ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ
КОМПАНІИ ЗИНГЕРЪ
Необходимы для домашняго употребленія. Образцовы въ конструкціи и исполненіи. Продаются только въ магаз. Комп. Зингеръ.
Отпускъ машинъ съ платежемъ **отъ 1 рубля въ недѣлю.**
Безплатное обученіе шитью и моднымъ художественнымъ вышивкамъ.
Остерегайтесь поддѣлокъ!
Ручныя машины съ высокимъ рукавомъ во всѣхъ нашихъ магазинахъ отъ 25 руб.
Болѣе 1200 собственныхъ магазиновъ по всей Россіи!
Магазинная вывѣска
Рисунокъ утв. Отд. пром. и торг.
М. Фин.
THE SINGER MANFG. CO.
TRADE MARK
фабричное клеймо которымъ снабжены машины.
ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԶԻՆԳԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Վաճառվում են միայն Ընկերութեան սեփական խանութներում։ Աւելի քան 1200 խանութ Ռուսաստանի Կայսրութեան ամեն քաղաքներում։ Խանութները ճանաչվում են Ռուսաց «Զ» տառը ձևակերպող ցուցանակներով, համաձայն ֆինանսների վինիստր.—Արդիւնաբեր. և Առևտր. բաժնի հաստատած նկարին։ Զգուշացէք կեղծիքներից։
Մեքենաները տրվում են սկսած շաբաթական 1 ռուբլի վճարից։ Կ. 6—25

Дозволено цензурою. Тифлисъ, 29-го апрѣля 1905 г. Տպար։ Ս. բեկ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. № 15.